ՕՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

33-ՐԴ ՏԱՐԻ

Ա Յ Ս

ՈՒՐԲԱԹ
10
ՀՈՒԼԻՍԻ
1953 Թ.
№ 161 (9848)

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.

— Ինֆորմացիոն հաղորդագրու
Միության Կոմունիստական պարտիա
Կոմիտեի Պլենումի մասին (1-ին էջ):
— ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նս
(1-ին էջ):
— ՍՍՌՄ Արտաքին գործերի
(2-րդ էջ):
— Երկրին ավելի շատ և բարձր
տալու համար: (1-ին էջ):
— Կոմբայնների խմբային աշխա
վարի ժամանակ (1-ին էջ):
— Պ ա ր տ ի կ ա ն կ յ ա ն ք:
տիական ղեկավարություններ արտադր
(2-րդ էջ):

# ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԼԵՆՈՒՄԻ ՄԱՍԻՆ

**Օրերս կայացավ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի Պլենումը:**

ՍՄԿՊ Կենտկոմի Պլենումը, լսելով և քննարկելով Կենտկոմի Նախագահության՝ ընկ. Գ. Մ. Մալենկովի զեկուցումը Լ. Պ. Բերիայի հանցավոր հակապարտիական և հակապետական գործողությունների մասին, որոնք ուղղված են եղել օտարերկրյա կապիտալի շահերի օգտին Սովետական պետությունը թուլացնելու նպատակին և արտահայտվել են ՍՍՌՄ Ներքին գործերի մինիստրությունը Կառավարությունից և Սովետական Միության Կոմունիստական պարտիայից վեր դասելու ուխտադրուժ փորձերի մեջ, որոշում ընդունեց՝ Լ. Պ. Բերիային հանել ՍՄԿՊ Կենտկոմի կազմից և նրան վտարել Սովետական Միության Կոմունիստական պարտիայի շարքերից որպես Կոմունիստական պարտիայի և սովետական ժողովրդի թշնամու:

---

# ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆՈՒՄ

*Նկատի ունենալով, որ վերջին ժամանակներս բացահայտվել են Լ. Պ. Բերիայի հանցավոր հակասպետական գործողությունները, որոնք ուղղված են եղել օտարերկրյա կապիտալի շահերի օգտին Սովետական պետությունը քայքայելու նպատակին, ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահությունը, քննության առնելով այդ հարցի վերաբերյալ ՍՍՌՄ Մինիստրների Սովետի հաղորդումը, որոշեց.*

*1) Լ. Պ. Բերիային հանել ՍՍՌՄ Մինիստրների Սովետի Նախագահի առաջին տեղակալի պաստից և ՍՍՌՄ Ներքին գործերի մինիստրի պաստից:*

*2) Լ. Պ. Բերիայի հանցավոր գործողությունների վերաբերյալ գործը հանձնել ՍՍՌՄ Գերագույն Դատարանի քննությանը:*